

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 63/6
28 նոյեմբերի 2017թ.

Քննարկվեց «ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ գանգատը լրացուցիչ առաջադրված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

«ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՎՍՎ թիվ 20 բաժնի կողմից ստացված N1448 գրության առ 06.10.2017թ. 2017թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի և եկամտային հարկի հաշվարկների ուշացման հետ կապված հաշվարկվել է 285.588 և 197.602 դրամի չափով 5% տուգանք:

Խնդիրը նրանում է, որ «ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) գտնվում է լուծարային գործընթացում և ընկերությունում անց է կացվում լուծարային ստուգում, ինչի հետևանքով հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնել չէր ստացվում: Այդ մասին տեղեկացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին secretariat@customs.am հասցեին ուղարկելով համապատասխան գրություններ 14/06/2017, 12/07/2017 և 09/08/2017թ.: Վերջին գրության հիման վրա ՊԵԿ-ի կողմից որոշվեց խնդրին տալ ավելի ընհանրական լուծում, որի հետևանքով խնդրարկվել է հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնել:

Նշված խնդրի առնչությամբ գանգատաբերը բանակցել է ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության պետի հետ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերանայել վերը նշված տուգանքները, քանի որ «ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի կողմից հաշվետվությունների ուշ ներկայացնելը պայմանավորված չէ վերջինիս թերացմամբ կամ անպատասխանատվությամբ, այլ ծրագրային խնդիրներով, ինչի մասին համապատասխան ժամկետներում տեղեկացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համապատասխան բաժնին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 06.06.2017թ. հրապարակվել է N1012420 հանձնարարագիրը «ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության լուծարային ստուգում կատարելու վերաբերյալ: Հաշվի առնելով նշված հանգամանքն ընկերությունը սկսած 2017թ. մայիս ամսվա համար եկամտային հարկի և ավելացված արժեքի հարկի գծով հաշվետվությունները ուղարկելիս պարբերաբար ունեցել է խնդիրներ: Մասնավորապես, եկամտային հարկի և ԱԱՀ-ի հաշվարկները գրանցելիս ընկերությունը ստացել է հետևյալ հաղորդագրությունը. «Ընտրված հաշվետու ժամանակաշրջանը հարկային մարմինների կողմից ստուգվել կամ ստուգվում է, հետևաբար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն,

Դուք այդ ժամանակահատվածի համար չեք կարող ներկայացնել հաշվարկ»:

Նշված խնդրի կապակցությամբ ընկերությունը բազմիցս բարձրաձայնել է ՀՀ ԿԱ ՊԵԿ secretariat@customs.am հասցեին համապատասխան գրություններ ուղարկելու, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումներ կատարված հեռախոսազանգերի միջոցով:

Տվյալ դեպքում պետք է փաստել, որ ընկերության կողմից եկամտային հարկի և ԱԱՀ-ի հաշվարկները ներկայացնելու հետ կապված խնդիրները պայմանավորված են եղել լուծարային ստուգման մեջ գտնվելու հետ կապված ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման համակարգում առաջացող խնդիրներով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20-րդ բաժնի 06.10.2017թ. N1448 գրությամբ ընկերությանը հայտնվել է, որ 2017թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի և եկամտային հարկի հաշվարկներում արտացոլված 2.855.887 դրամ և 1.976.026 դրամ հարկի գումարների նկատմամբ, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, հաշվարկվում է 5% տուգանք՝ 285.588 դրամի և 197.602 դրամի չափով:

Քննարկվող դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ 2017թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի և եկամտային հարկի հաշվարկները սահմանված ժամկետներում չներկայացվելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն կիրառված տուգանքի գումարները ենթակա են վերանայման (նվազեցման), քանի որ նշված խախտումները կատարելու մեջ բացակայում է ընկերության մեղքը: Մասնավորապես, ընկերության փորձերը սահմանված ժամկետներում ներկայացնել 2017թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի և եկամտային հարկի հաշվարկները՝ կապված լուծարային ստուգման գործընթացի մեջ գտնվելու հետ, ձախողվել են:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

1. «ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ գանգատը բավարարել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչությանը.

«ԷԼԹԻԷՔՍ ՔՐԻԴԵՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի ԱԱՀ-ի և եկամտային հարկի անձնական հաշվի քարտերից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքի գումարները:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ